# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 25 - 26 (16420) ՇԱԲԱԹ, 2 ԱՊՐԻԼԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԶԱՏԻԿ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

### ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՀՊԱՐՏ Է ԻՐ ԵՐԿՐԻ ՀԱՅԱԶԳԻ ԶԱՎԱԿՆԵՐՈՎ»

*2016 թվականի մարտի 27-ին, Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնը նշող հավատացյալներով լեփ-լեցուն Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում կատարվեց ժամերգություն, Անդաստան, ապա մատուցվեց Զատկական Սուրբ եւ Անմահ պատարագ:*



Առաջնորդանիստ եկեղեցում Սուրբ պատարագին ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի բռնագրավված տարածքների եւ բռնի տեղաշարժվածների ու փախստականների նախարար Սոզար Սուբարին, Վրաստանի Կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն, Թբիլիսիի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ԱՌԹԻՎ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Սուրբ Զատկի առթիվ շնորհավորական ուղերձ է հղել ըստ Գրիգորյանական օրացույցի, Սուրբ Զատիկը նշող կրոնական միավորներին: «Թանկագի՛ն հայրենակիցներ, բոլոր նրանց, ովքեր մարտի 27-ին նշում են Քրիստոսի Սուրբ Հարությունը, շնորհավորում եմ այդ մեծ տոնի առթիվ: Մաղթում եմ նորացում, բարու հաղթանակ եւ լավագույն ապագայի հավատ: Թող այս տոնը ձեզ բերի բարեկեցություն, խաղաղություն եւ երջանկություն ձեր ընտանիքներին եւ մեր հայրենիքին»,- նշված է ուղերձում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԻՆ

*Պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի արտաքին գործերի եւ համագործակցության հարցերի պետքարտուղար Ֆիլիպ Համոնդը:*

Այցի շրջանակներում հյուրի հետ հանդիպում ունեցան Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն, պաշտոնական այլ անձինք:

Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Ֆիլիպ Համոնդի հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների հարցերը: Առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման թեմային: Մեծ Բրիտանիայի պետքարտուղարը կրկին ընդգծեց Մեծ Բրիտանիայի պատրաստակամությունը Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի ինտեգրման գործում եւ ընդգծեց, որ Վրաստանը այդ հար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԿՄԱՍՆԱԿՑԻ»

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ

*Մարտի 31-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հետ հանդիպումից հետո, հայտարարեց, որ «Վրացական երազանք-Դեմոկրատական Վրաստան» կուսակցությունը 2016 թվականի խորհրդարանական ընտրություններին կմասնակցի իշխող «Վրացական երազանք» դաշինքից անկախ:*

«Մենք կարծում ենք, որ դա ընդունելի ձեւ է, որ «Վրացական երազանքը» ընտրություններին գնա առանձին: Համապատասխան հայտարարությամբ հանդես է եկել նաեւ Հանրապետական կուսակցությունը»,- ասաց նա եւ հավելեց, որ անկախ դրանից, «հանրապետական» նախարարները կառավարությունում կպահպանեն իրենց պաշտոնները:

Վարչապետի հավաստմամբ, կառավարության կայունությունը շատ ավելի նշանակալից է եւ այդ պատճառով էլ ընդունվել է նման որոշում: «Անկախ դրանից, մենք գտնում ենք, որ, չնայած կուսակցական պատկանելիությանը, անհրաժեշտ է աշխատանքը սովորականի նման շարունակել: Կառավարության կայունությունը մեծ նշանակություն ունի, եւ իշխանությունը կփորձի մինչեւ ընտրությունները այդ պայմանակարգով աշխատել»,- հայտարարեց նա:

Իր հերթին, Վրաստանի խորհրդարանի նա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀՈԲԵԼՅԱՆ

## ՄԱՐՏԻ 31-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՕՐՆ Է

*Մարտի 31-ին երկրում նշվեց 1918 թվականի անկախության ակտի հիման վրա Վրաստանի անկախության վերականգնման հարցով 1991 թվականի մարտի 31-ին անցկացված հանրաքվեի 25-ամյա տարելիցը:*



Այն ժամանակ հանրաքվեին մասնակցեց 3.302.302 մարդ: Հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման գործում ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին Աբխազիայի ինքնավար հանրապետության եւ Հարավային Օսեթիայի նախկին ինքնավար մարզի բնակիչները:

Հանրաքվեի հարցին՝ «Համաձա՞յն եք, արդյոք, որ 1918 թվականի մայիսի 26-ի ակտի հիման վրա վերականգնվի Վրաստանի պետական անկախությունը», Վրաստանի ձայնի իրավունք ունեցող բնակիչների (այդ թվում՝ աբխազներն ու օսերը) 98 տոկոսը դրական պատասխան տվեց:

1991 թվականի մարտի 31-ին հանրաքվեն անցկացվեց անկախ Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի գլխավորությամբ, ընդ որում, նրա ծննդյան օրը: Այս տարի կլրանար նրա 77-ամյակը:

1991 թվականի ապրիլի 9-ին, մարտի 31-ին անցկացված հանրաքվեի արդյունքներից ելնելով, Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակեց Վրաստանի պետական անկախության վերականգնումը:

ԱՑՑ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՄՆ-ՈՒՄ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Վաշինգտոնում մասնակցեց միջուկային անվտանգության գագաթաժողովին:*




Այցի շրջանակներում Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ ԱՄՆ սենատորների եւ կոնգրեսականների, Հունգարիայի եւ Լեհաստանի նախագահներ Յանոշ Անդերի եւ Անջեյ Դուդայի, եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հետ:

Վրաստանի նախագահը ելույթ ունենալով միջուկային անվտանգության գագաթաժողովին, ներկաներին ներկայացրեց այն մարտահրավերները, որոնք ծառացած են տարածաշրջանի եւ, մասնավորապես, Վրաստանի առջեւ:

Նախագահը ելույթ ունեցավ նաեւ Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, մասնակցեց ԱՄՆ նախագահի անունից տրվող ճաշկերույթին:

ԱՅՑԵԳԻՐ-ՎԻԶԱ

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

საქართველოს იუსტიციის სამინისტრო

*Ինչպես արդեն հաղորդել ենք, եզրագծին է մոտենում Վրաստանի քաղաքացիների համար Եվրամիության եւ Շենգենյան գոտու անդամ երկրներ անայցեգրային պայմանակարգի ներդրման ընթացակարգը: Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հայտարարությամբ, այդ հարցը վերջնականապես կլուծվի առաջիկա ամիսներին:*

**Ձեզ ենք ներկայացնում անայցեգրային պայմանակարգից օգտվելու համար պարտադիր ընթացակարգերը:**

* 2015 թվականի դեկտեմբերի 18-ին եվրահանձնաժողովը հրապարակեց Վրաստանի կողմից անայցեգրային պայմանակարգի ազատականացման գործողությունների ծրագրի իրականացման վերջնական հաշվետվությունը, ըստ որի՝ Վրաստանի քաղաքացիների համար Եվրամիություն առանց այցեգրերի ուղեւորության պայմանակարգի ներդրման համար անհրաժեշտ է, որ բոլոր պահանջները Վրաստանի կառավարության կողմից կատարվել են:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցում հասել է նշանակալի առաջընթացի: Հանդիպմանը նշվեց, որ Վրաստանը պետք է ունենա առանց արտաքին ուժերի միջամտության ինքնուրույն իրավունք կատարելու հնարավորություն: Հանդիպմանը կողմերն ընդգծեցին անվտանգության ոլորտում համագործակցության խորացման կարեւորությունը:

Հանդիպման ավարտից հետո, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Ֆիլիպ Համոնդը մեկնեցին Ռուսթավի, որտեղ ծանոթացան բրիտանական «Բրիտիշ Պետրոլիում» ընկերության կողմից իրականացվող գազամուղի ընդլայնման նախագծի ընթացքին:

Այցի շրջանակներում Ֆիլիպ Համոնդը ելույթ ունեցավ Հարավային Կովկասի երիտասարդ քաղաքական գործիչների համաժողովում, որը կազմակերպել էր Նիդերլանդների բազմակուսակցական ժողովրդավարության ինստիտուտը (NIMD):



ՋԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ



# ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԻ ԾՐԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՐՈՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

***Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն, մարտի 25-ին կառավարության նիստի ավարտից հետո, հայտարարեց, որ գործադիր իշխանությունն ունի ծրագիր, թե ինչպես օգնել աշխատանք որոնողներին:***

Նախարարի խոսքերով, կառավարության նիստում հաստատեցին «2016-2018 թվականների աշխատանքային շուկայի ակտիվ քաղաքականության ռազմավարության եւ գործողությունների ծրագրի մասին» որոշումը: Ըստ Դավիթ Սերգեենկոյի, այդ ռազմավարությունը հանդիսանում է այն բարեփոխման անկապտելի մասը, որն իրականացվելու է մասնագիտական վերապատրաստման ոլորտում: Ինչպես նշեց առողջապահության նախարարը, ծրագրի մշակման համար իրականացվել է աշխատանքի շուկայի ուսումնասիրությունը, բացահայտվել են բոլոր այն գործոնները, որոնք արգելակում են առաջընթացին, եւ այդ ամենը դրվել է ռազմավարության մշակման հիմքում:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԿՄԱՍՆԱԿՑԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խագահ, հանրապետական Դավիթ Ուսուփաշվիլին նշեց, որ թե' գործադիր եւ թե' օրենսդիր մարմիններում «հանրապետականները» կշարունակեն սովորական պայմանակարգով աշխատանքը: «Առաջիկա խորհրդարանական ընտրություններին ինքնուրույն մասնակցությունը չի նշանակում կոալիցիայից, խորհրդարանական մեծամասնությունից, կառավարությունից եւ մունիցիպալային մարմիններից «հանրապետականների» անմիջական ու ավտոմատ հեռացումը»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին :

Հանրապետական կուսակցության հաղորդագրության մեջ նշված է նաեւ, որ «հանրապետականները» կառավարական պաշտոնները կթողնեն միայն ելնելով իրենց քաղաքական օրակարգից կամ վարչապետի որոշմամբ:

Նշենք, որ նախօրյակին առաջիկա խորհրդարանական ընտրություններին ինքնուրույն, առանց կոալիցիայի մասնակցության մասին հայտարարությամբ հանդես եկավ Հանրապետական կուսակցության նախագահ Խաթունա Սամնիձեն: Նրա խոսքերով, մինչեւ ընտրությունները «հանրապետականները» կշարունակեն մնալ «Վրացական երազանք» կոալիցիայի շարքերում: «Կառավարությունում գտնվելու ընթացքում «հանրապետական» նախարարները՝ վարչապետի ղեկավարությամբ, կշարունակեն կատարել խորհրդարանի կողմից հաստատված ծրագիրը, թեպետ խորհրդարանում իրավիճակը մի փոքր կփոխվի՝ «Հանրապետական» խորհրդարանական խմբակցությունը կառաջնորդվի կուսակցական քաղաքական առաջնահերթություններով, առանձին հարցերի բացառությամբ, որոնք հնարավոր կլինի համաձայնեցնել մեծամասնական պայմանակարգով»,- ասաց Խաթունա Սամնիձեն:

Ավելացնենք, որ, 2012 թվականի ընտրություններից հետո, առաջինը «Վրացական երազանք» կոալիցիայից հեռացան «Ազատ ժողովրդավարները»՝ Իրակլի Ալասանիայի գլխավորությամբ: Վերջերս «Վրացական երազանքի» փլուզման մասին սկսեցին խոսել այն բանից հետո, երբ իշխող կոալիցիայի անդամ՝ Արդյունաբերողների առաջնորդ Գոգի Թոփաձեն պաշտպանության նախարար, Հանրապետականների անդամ Թինա Խիդաշելուն մեղադրեց 2015 թվականի հոկտեմբերին Սագարեջոյի շրջանում միջանկյալ խորհրդարանական ընտրությունները կեղծելու համար:

Ինչպես հայտարարեցին «Վրացական երազանք» իշխող կոալիցիայում, այսօր՝ ապրիլի 2-ին, անցկացվելու է կոալիցիայի քաղխորհուրդը: Ինչպես նշեց Գոգի Թոփաձեն, ընտրություններին ինքնուրույն մասնակցելուց, ընտրական արգելագծի՝ հինգ տոկոսի հաղթահարումից հետո միայն հնարավոր կլինի խոսել միավորման եւ նոր կոալիցիայի կազմավորման վերաբերյալ:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԽԶՎԵ՞Ն

*Ուկրաինայի Գերագույն ռադայի արտասահմանյան գործերի հարցերով կոմիտեն հավանություն է տվել ՌԴ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների խզմանն առնչվող բանաձեւի նախագծին:*

*Իր հերթին, Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն հայտարարել է, որ ինքը հանդես է գալիս Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների խզման գաղափարի դեմ:*

*«Ռադան չի սատարի այդ օրինագծին: Եկեք դա նույնիսկ չքննարկենք»,- ընդգծել է Ուկրաինայի նախագահը եւ հավելել, որ հիմնական ջանքերը պետք է կենտրոնացնել Մինսկյան պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ:*

ՍԻՐԻԱ

## ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՎԱՂԱԺԱՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Սիրիայի նախագահ Բաշար Ասադը հայտնել է, որ համաձայն է վաղաժամկետ նախագահական ընտրություններ անցկացնել, եթե դա ցանկանա ժողովուրդը:*

*Սիրիայի առաջնորդի համոզմամբ, պետության ղեկավարին հարկավոր է ընտրել քաղաքացիների ուղղակի քվեարկությամբ, այլ ոչ թե խորհրդարանական ընթացակարգով:*

*Ասադը մեկնաբանել է նաեւ երկրում հայտարարված հրադադարի ռեժիմի ընթացքը, նշելով, որ այն «հարաբերականորեն հաջողված է»:*

ՊԱԿԻՍՏԱՆ

## ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

*Պակիստանի Լահոր քաղաքի զբոսայգում, որտեղ Զատկի տոնը նշելու համար եկել էին Պակիստանում կրոնական փոքրամասնություն կազմող քրիստոնյաները, իրականացված պայթյունի հետեւանքով զոհվել է առնվազն 72 մարդ, այդ թվում՝ շուրջ 30-ը երեխաներ: Վիրավորվել է ավելի քան 300 մարդ, ներառյալ 56 երեխա:*

*Հարձակման պատասխանատվությունն ստանձնել է «Թալիբան» շարժման հետ կապված «Ջամաաթ ուլ Աhրարա» ահաբեկչական խմբավորումը:*

ԶԱՏԻԿ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՀՊԱՐՏ Է ԻՐ ԵՐԿՐԻ ՀԱՅԱԶԳԻ ԶԱՎԱԿՆԵՐՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ Կարինե Մանուկյանը: Այստեղ էին նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդական Կարեն Պարունակյանը եւ ռազմական կցորդ գնդապետ Սամվել Ռամազյանը:

Հրնթացս Սուրբ պատարագի, պատարագիչ Տեր Սամվել քահանա Թորոսյանը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի զատկական պատգամը:

Հավարտ Սուրբ եւ Անմահ պատարագի, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի հայկական համայնքների հոգեւոր հովիվ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը ներկաներին շնորհավորեց Քրիստոսի Հարության հրաշազարդ տոնի առիթով, եւ հանուն Վիրահայոց թեմի առաջնորդի ողջունեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլուն եւ ներկա պաշտոնյաներին, ի մասնավորի ասելով. «Կան հարյուրավոր ժողովուրդներ, որ պետականություն չունեն, իսկ վիրահայերս՝ երկուսն ունենք: Մենք հավասարապես սիրում ենք Հայաստանի Հանրապետությունը եւ Վրաստանը: Մենք հպարտ ենք, որ հայ ենք եւ հպարտ ենք, որ ազատ, անկախ Վրաստանի քաղաքացիներ ենք...»:

Վրաստանի վարչապետը Քրիստոսի Սուրբ Հարության տոնը նշող վրացահայությանը շնորհավորեց Սուրբ Զատկի տոնի կապակցությամբ եւ նշեց, որ Սուրբ Հարության տոնը չարի դեմ բարու, խավարի դեմ լույսի հաղթանակն է: Վարչապետ Կվիրիկաշվիլին կարեւորեց հայերի եւ վրացիների դարավոր բարեկամությունը, որին պետք է զգույշ վերաբերվել եւ ընդգծեց, որ Վրաստանը հպարտ է իր երկրի հայազգի զավակներով, որոնք վրացիների հետ միասին կառուցում են մի երկիր, որը բազմազգ մշակույթի, տարբեր ժողովուրդների համագոյակցության օրինակ է ամբողջ աշխարհում:

* * *

Լեփ-լեցուն էր նաեւ Բաթումիի «Սուրբ Փրկիչ» եկեղեցին, որտեղ Զատկական Սուրբ պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Սրբազան Հայրը եւ տեղի հայությանը Սուրբ Զատիկը շնորհավորեցին եւ Սուրբ պատարագին մասնակցեցին Աջարիայի Ինքնավար Հանրապետության վարչապետ Արչիլ Խաբաձեն, Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովը, Աջարիայի կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար Գիորգի Թավամաիշվիլին, Բաթումիում Իրանի Իսլամական Հանրապերության հյուպատոս Աhմադ Ռեզա Արզզիանին: Այստեղ էր նաեւ Բաթումիում ՀՀ Գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը:



Հավարտ Սուրբ պատարագի, Ալեքսանդր Մանթաշովի անվան կրթության, մշակույթի եւ երիտասարդության կենտրոնում Թեմակալ առաջնորդը բացումը կատարեց նկարիչ Հրաչ Սեչինյանի աշխատանքների ցուցահանդեսի:

Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնին նվիրված Սուրբ պատարագներ մատուցվեցին Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում:

***Լուսանկարները՝ ՅՈՒՐԻ ԱԿՈՒԼՅԱՆԻ***

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՎՐԱՍՏԱՆԸ ԱՆՇԵՂ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿՈՒՐՍՈՎ



***Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ընդունեց աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահ Ժոզեֆ Դոլին:***

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եվրոպական ինտեգրման օրակարգի հարցը: Մասնավորապես, վարչապետն ընդգծեց, որ իր գլխավորած կառավարությունն անշեղորեն ընթանում է երկրի եվրաինտեգրման կուրսով եւ հյուրին ներկայացրեց այդ ուղղությամբ իրականացվող բարեփոխումները եւ կառավարության առաջնահերթությունները:

Հանդիպմանը ներկա էին Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն եւ Վրաստանի խորհրդարանի արտաքին կապերի կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ



***Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հանդիպում ունեցավ միկրոֆինանսական կազմակերպությունների ասոցիացիայի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը քննարկվեց եկամտահարկի բարեփոխմանն ու հարկային վարչարարության վերացմանն առնչվող հարցեր:***

Ինչպես նշվեց հանդիպմանը, քննարկվեց նաեւ այդ գործընթացում ֆինանսական հատվածի ներգրավման հարցը: «Մենք միկրոֆինանսական կազմակերպությունների ասոցիացիայի ներկայացուցիչներին ներկայացրինք այն բարեփոխումները, որոնք իրականացվել էին վերջին երեք տարվա ընթացքում հարկային ոլորտում, հարկային քաղաքականության ազատականացման նպատակով: Մենք խոսեցինք նաեւ այն նորամուծությունների մասին, որոնք ծրագրվում են հարկային օրենսդրությունում: Մենք ակտիվ հանդիպումներ ենք անցկացնում բիզնես հատվածի հետ եւ հանդիպումներ անցկացնում շահագրգռված բոլոր կողմերի հետ, որպեսզի մեր հարկային օրենսդրությունն առավել համապատասխանեցնենք այն հիմնախնդիրներին, որոնք այսօր առկա են»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

Իր հերթին, միկրոֆինանսական կազմակերպությունների ասոցիացիայի նախագահ Բեսիկ Շենգելիան հարկային օրենսգրքում ծրագրված փոփոխություններն անվանեց «հետաքրքիր ու կարեւոր»:

ՈԼՈՐՏ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՎԵՐԱՆՈՐՈԳՎԻ 100 ԴՊՐՈՑ



***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության մամլո ծառայության տեղեկատվությամբ, առաջիկա չորս տարիների ընթացքում «Հազարամյակի մարտահրավեր-Վրաստան» հիմնադրամի նախագծի շրջանակներում, Վրաստանի բոլոր տարածաշրջաններում կավարտվի 100 դպրոցի վերանորոգումը:***

Ներկայումս դպրոցական շինարարության ընթացքին ծանոթանալու համար Վրաստանի կրթության նախարար Թամար Սանիկիձեն շրջայց է կատարում երկրի տարածաշրջաններում:

Գերատեսչության տարածած տեղեկատվության համաձայն, վերանորոգման ենթակա դպրոցների մեծ մասը գտնվում է գյուղերում: Նախագծի իրականացման դեպքում, Վրաստանի տարբեր տարածաշրջանների 100 դպրոցների 41 հազար աշակերտի համար ուսուցման պայմանները կբարելավվեն: Արդեն այս տարի Սամցխե-Ջավախեթիի եւ մյուս տարածաշրջաններում կավարտվի շուրջ 30 դպրոցի վերանորոգումը:



### ՄԱՐՏԻ 25-Ը՝ ՎՐԱՑԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐ

*Մարտի 25-ին Վրացական Ուղղափառ Առաքելական եկեղեցին նշեց ինքնուրույնության վերականգնման օրը: Տոնի առթիվ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը Սուրբ Աստվածամոր տաճարում մատուցեց տոնական պատարագ:*

*Նշենք, որ Վրացական Ուղղափառ եկեղեցին Անտիոքի եկեղեցուց ինքնուրույնությունը ձեռք է բերել 457 թվականին, թեպետ Ռուսական կայսրությունը այն 1811 թվականին վերացրեց եւ վրացական եկեղեցին ղեկավարվում էր էկզարխատների կողմից:*

*Վրացական Ուղղափառ եկեղեցու ինքնուրույնությունը վերականգնվեց 1917 թվականի մարտի 25-ին:*

### ԼԱԴՈ ՊԱՊԱՎԱՆ ԹՈՂՆՈՒՄ Է ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԸ

*«Ընթացիկ տարվա մայիսի 1-ից Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր Վլադիմիր Պապավան պաշտոնաթող է լինում: Ակադեմիական խորհուրդը բավարարեց մայիսի 1-ից ռեկտորի պաշտոնից հեռանալու մասին ռեկտորի խնդրանքը»,- ասված է համալսարանում տարածված տեղեկատվության մեջ:*

*Համաձայն տեղեկատվության, մինչեւ մայիսի 1-ը կանցկացվեն համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրությունները:*

### «ԲԱԶՄԱԶԳ ՎՐԱՍՏԱՆԻ» ՂԵԿԱՎԱՐԸ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

*Վրաստանի խորհրդարանը հաստատել է ինը հոգուց կազմված հանձնաժողովը, որն ընտրելու է հանրային հեռուստատեսության հոգաբարձական խորհրդի նոր անդամների: Հանձնաժողովի նախագահ է նշանակվել «Բազմազգ Վրաստան» համաքաղաքացիական շարժման ղեկավար Առնոլդ Ստեփանյանը:*

*Հիմնադրույթի համաձայն, հանձնաժողովը մինչեւ ապրիլի 10-ը պետք է ընտրի հոգաբարձական խորհրդի առնվազն 12 անդամների: Հետո այդ թեկնածուները կներկայացվեն Վրաստանի խորհրդարանի (մեծամասնության եւ փոքրամասնության), օմբուդսմենի եւ Աջարիայի ինքնավար հանրապետության գերագույն խորհրդի քննարկմանը, որից հետո հաստատման համար կներկայացվի խորհրդարանին:*

ՄՈՆՈՊՈԼԻԱ

## ԿԱԽԱ ՕՔՐԻԱՇՎԻԼԻ. «ԲԱՆԿԵՐԸ ՉՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻՋԱՄՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ»

***«Սաքարթվելոս բանկի»-ն ընդլայնում է իր ոչ պրոֆիլային ակտիվների ցանցը: Հայտնի դարձավ, որ «Սաքարթվելոս բանկի» հոլդինգում ընդգրկված «Առողջապահության վրացական խումբը» (GHG) 14 միլիոն ԱՄՆ դոլարով գնել է GPC դեղագործական ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը:***

Քաղաքակիրթ շատ երկրներում նման գործարքները, որոնք նախատեսում են խոշոր ընկերությունների միավորում կամ կլանում, անցկացվում են մոնոպոլիաների ծագման ռիսկի ստուգումներ եւ միայն դրանից հետո են թույլ տալիս նման համաձայնագրերի կնքումը: Սակայն Վրաստանում դեղագործական շուկան կարգավորումներ չունի, ուստիեւ նման խոշոր գործարքի հետ կապված ռիսկը կարող է ստուգել միայն մրցակցության գործակալությունը:

Գործակալությունում նշեցին, որ օրենքը խոշոր ընկերություններին պարտավորեցնում է հակամոնոպոլիստական մարմիններին տեղեկատվություն փոխանցել նման լուրջ գործարքների կնքման մտադրության մասին: Անմիջականորեն գործարքի վերաբերյալ հաշվետվությունը պետք է պատրաստվի 1,5 ամսվա ընթացքում, որի քննարկման արդյունքում որոշվում է, թե որքանով է այդ գործարքը սպառնալիք ստեղծում երկրի դեղագործական շուկայի համար: Ներկա դրությամբ, գործարքի թեման մեկնաբանեցին Վրաստանում գործող դեղագործական մյուս ընկերությունները: Մասնավորապես, PSP ընկերության ղեկավար, Դմանիսիից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր, «Անկուսակցական, անկախ մեծամասնականներ» խմբակցության նախագահ Կախա Օքրիաշվիլին նշեց, որ «Սաքարթվելոս բանկի» եւ GPC-ի գործարքը լուրջ ռիսկեր են առաջացնում դեղագործական շուկայում:

«Շուկայում բավականին բարձր է մրցակցության մակարդակը եւ դատելով ամեն ինչից, GPC-ին հայտնվեց բավականին բարդ իրավիճակում, քանզի ընկերությունը վաճառվեց շատ էժան, ինչը զարմանք ու որոշակի տարակուսանք առաջացրեց: Դա լավ ընկերություն էր, եւ այն ուներ մարկետինգային հստակեցված ռազմավարություն»,- հայտարարեց նա:

Կախա Օքրիաշվիլու խոսքերով, այդ գործարքի շնորհիվ, փաստորեն, ընկերությունը դարձել է «Սաքարթվելոս բանկի» սեփականությունը:

«Այսպիսով, ստացվում է, որ բանկերի կողմից ոչ պրոֆիլային ակտիվների յուրացումն արգելող օրենքը չի գործում: Դա առանց այդ էլ հստակորեն երեւում էր շինարարական բիզնեսի ոլորտում, որտեղ մեծ ակտիվություն է ցուցաբերում «Սաքարթվելոս բանկի»-ն: Դա շատ վատ ազդեցություն է գործում գործարարության վրա: Բանկերը չպետք է ունենան գործարարության ոլորտին միջամտելու իրավունք եւ, քանի դեռ այդ վիճակը չի կարգավորվել, երկիրը առաջընթաց չի ունենա: Բնականաբար, առկա են նաեւ այլ գործոններ, սակայն բանկերի եւ բիզնեսի մրցակցությունը ամենակարեւոր հանգամանքն է: Նույնը պնդում են նաեւ էկոնոմիկայի մյուս հատված ներկայացուցիչները, մասնավորապես, շինարարական ոլորտի գործարարները: Այդ ամենի արդյունքում բիզնես միջավայրը վատթարանում է, իսկ մրցակցությունը սահմանափակվում, քանի որ բանկերն իրենց վերապահում են ոչ պրոֆիլային գործարարության իրականացման իրավունք»,- հայտարարեց Կախի Օքրիաշվիլին:

Նրա խոսքերով, ներկա դրությամբ, դժվար է կանխագուշակել, թե կոնկրետ ինչ արդյունքների կհանգեցնի դեղագործական բիզնեսի համար վերոնշյալ գործարքը, թեպետ ակնհայտ է, որ GPC-ին զգալիորեն կամրապնդվի, քանզի «Սաքարթվելոս բանկի»-ն դրա համար նշանակալի ռեսուրսներ ունի:

Նշենք, որ վերջին ժամանակներում «Առողջապահության վրացական խումբը» սկսեց ակտիվորեն ընդլայնվել, ձեռք բերեց թբիլիսյան կլինիկաներից մեկի բաժնետոմսերի 33 տոկոսը, այսպիսով, իր ակտիվում այդ բաժնետոմսերը հասցնելով 99,7 տոկոսի: Վերոնշյալ գործարքի արժեքը կազմեց 1 միլիոն դոլար:

Մինչ այդ, այդ խմբում ընդգրկված «Էվեքսբժշկական կորպորացիան» գնեց դեռեւս խորհրդային ժամանակաշրջանից մնացած հին կլինիկաներից մեկը: Գործարքի արժեքը կազմեց 12 միլիոն եւ ներկայումս կորպորացիայի ներքո գտնվում է 350 տեղ ունեցող հիվանդանոցը:



«Առողջապահության վրացական խումբը» ընդգրկված է «Սաքարթվելոս բանկի»-ի հոլդինգում եւ իր տնօրինության տակ ունի «Էվեքս» բժշկական կորպորացիան» եւ երկրի ամենախոշոր ապահովագրական «Իմեդի էլ» ընկերությունը:

2014 թվականի դեկտեմբերին «Սաքարթվելոս բանկի»-ն հայտարարել էր ոչ պրոֆիլային ակտիվներից ազատվելու մտադրությունը, սակայն փորձագետների, ինչպես նաեւ գործարարների կարծիքով, այդ պարտավորությունը կատարվում է ձեւականորեն: Փաստորեն, բանկը շարունակում է ղեկավարել ընկերությունները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են շինարարությունը, ապահովագրությունը, առողջապահությունը, զբոսաշրջությունը, հյուրանոցային ոլորտը եւ այլն:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԱՅՑԵԳԻՐ-ՎԻԶԱ

# ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Դա նշանակում է, որ Եվրամիության համապատասխան ինստիտուտների կողմից իրավական ընթացակարգերի ավարտից հետո Վրաստանի քաղաքացին, որն ունի կենսաչափական անձնագիր, կարող է ուղեւորվել Շենգենյան գոտու տարածք, որը ներառում է Եվրամիության 22 անդամ երկրներին (Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Դանիա, Իսպանիա, Էստոնիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդերլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Հունաստան, Ֆրանսիա, Սլովակիա, Սլովենիա, Չեխիա, Շվեդիա, Հունգարիա, Ֆինլանդիա), բացառություն են կազմում Մեծ Բրիտանիան եւ Իռլանդիան ու Եվրամիությունում չներգրավված չորս երկրներ (Իսլանդիա, Լիխենշտեյին, Նորվեգիա, Շվեյցարիա): Անայցեգրային ուղեւորության պայմանակարգը գործում է նաեւ Շենգենյան գոտու անդամության թեկնածու չորս երկրներում (Բուլղարիա, Կիպրոս, Ռումինիա, Խորվաթիա):

* Անայցեգրային ուղեւորության պայմանակարգը չի առնչվում երկարաժամկետ այցելություններին, օրինակ, բարձրագույն կրթության ստացման կամ աշխատանքի համար:

* Կարճաժամկետ այցեգիրը նախատեսում է 180 օրվա ընթացքում ցանկացած 90 օրը, այսինքն՝ ցանկացած վեց ամսից միայն երեք ամիսը:

180 օրվանից թույլատրելի 90 օրը կարելի է օգտագործել լրիվությամբ կամ օրերը բաժանել:

* 90 օրվա ընթացքում թույլատրելի է բազմակի մուտք Եվրամիության /Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք, սակայն անհրաժեշտ է համոզվեք, որ ձեր այցելության տեւողությունը ընդհանուր առմամբ, չի գերազանցի վերջին 180 օրվա ընթացքում 90 օրը:

Եվրամիության /Շենգենյան գոտու անդամ երկրների տարածքում տեւական ժամանակահատվածով ուղեւորության ցանկության դեպքում, կրկին կգործի այցեգրային պայմանակարգը եւ Վրաստանի քաղաքացիները այցեգիրն ստանալու համար պետք է դիմեն Վրաստանում հավատարմագրված համապատասխան երկրների հյուպատոսությանը:

Անայցեգրային ուղեւորության պայմաններով նախատեսված 90-օրյա տեւողության կարճաժամկետ այցեգրի նպատակը կարող է լինել զբոսաշրջությունը, ընտանիքի անդամների (ազգականների) մերձավորների հետ հանդիպումը, գործնական հանդիպումների բանակցությունների վարումը, միջազգային խորհրդաժողովներին, գիտաժողովներին, սիմպոզիումներին կամ ցուցահանդեսներին մասնակցությունը, կարճաժամկետ ուսումնական դասընթացներին եւ վարժանքներին, փոխանակման ուսումնական ծրագրերին մասնակցությունը, մշակութային-գիտական եւ մարզական միջոցառումներին մասնակցությունը, բժշկական սպասարկումներից օգտվելը՝ կարճաժամկետ բուժական կուրս/վիրահատություն:

Ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ անայցեգիր ուղեւորության համար.

* Գործող կենսաչափական անձնագիր, որի գործողության ժամկետը Վրաստան վերադառնալու օրվա համար չպետք է լինի վեց ամսից պակաս:

Ինչ կպահանջեն Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք մուտք գործելու սահմանային վերահսկողության ժամանակ.

* Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք մուտք գործելու ժամանակ սահմանային ծառայության ներկայացուցիչները հնարավոր է հետաքրքրվեն, թե որն է հանդիսանում ձեր ուղեւորության նպատակը (օրինակ, գործնական այց, զբոսաշրջություն, բարեկամների կամ ազգականների հետ հանդիպում, 90-օրյա ժամկետով ուսումնական դասընթաց):

Ուղեւորության նպատակը հաստատելու համար սահմանային ծառայության ներկայացուցիչները իրավասու են պահանջելու հետեւյալ փաստաթղթերը.

* Վրաստան վերադառնալու տոմսը, հյուրանոցի ամրագիրը, ճանապարհորդական ապահովագրությունը, ճանապարհորդության ֆինանսական ապահովումը հաստատող փաստաթուղթը (օրինակ, կանխիկ գումարը, ճանապարհորդական կտրոնը, գործող բանկային էլեկտրոնային քարտ):

### ՆԿԱՏԻ ՈՒՆԵՑԵՔ

* Մինչեւ Եվրամիության /Շենգենյան գոտու անդամ երկրներում գտնվելու 90-օրյա (180 օրերից) ժամկետի սպառումը Վրաստանի քաղաքացին պետք է հեռանա Շենգենյան գոտուց:

Այդ երկրներում 90 օրից ավելի գտնվելու դեպքում, երկրորդ անգամ ուղեւորվելը հնարավոր կլինի միայն Շենգենյան գոտին թողնելուց 90-օրյա ժամկետի անցումից հետո:

* Անայցեգիր ուղեւորությունը չի ընձեռում Եվրամիության (Շենգենյան գոտու անդամ երկրներում աշխատանքի) տեւական ուսուցման իրավունք:

* Եվրամիություն/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք մուտք գործելու ժամանակ Վրաստանի քաղաքացին.

- չպետք է գտնվի այն անձանց ցուցակում, ովքեր սպառնալիք են ստեղծում հասարակական կարգուկանոնին եւ առողջությանը կամ ներքին անվտանգությանը,

- չպետք է լինի դատված Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների քրեական դատարանների կողմից այնպիսի իրավախախտումների համար, որոնք նախատեսում են ազատազրկում մինչեւ մեկ տարի ժամկետով,

- չպետք է լինի Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրներից նրա արտաքսման մասին որոշումը,

- չպետք է լինեն հակաօրինական գործունեությունում նրա մասնակցության կամ նման մտադրության մասին անտարակուսելի ապացույցներ,

- չպետք է լինեն այն անձանց ցուցակում, ում արգելված է մուտք գործել Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք:

* Վրաստանի քաղաքացիները պարտավոր են պաշտպանել այդ երկիր մուտք գործելու եւ գտնվելու օրենքները, նաեւ այդ երկրներում գործող մյուս օրենքները.

- 90-օրյա ժամկետի սպառման դեպքում, Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածքում գտնվելը կհամարվի անօրինական: Այդ անձը կարտաքսվի երկրից, եւ նա հինգ տարի ժամկետով իրավունք չի ունենա մուտք գործել Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք:

Այլընտրանքի տեսքով հնարավոր է օգտագործվի վարչական միջոցը՝ տուգանքը մինչեւ 3000 եվրոյի չափով: Տուգանքը չվճարելու դեպքում, իրավախախտողին կարգելվի մուտք գործել համապատասխան երկրներ (Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք):

- Օրինականորեն գտնվելու ժամանակահատվածում այլ իրավախախտումներ կատարելու դեպքում, Վրաստանի քաղաքացիներին կսահմանվի համապատասխան պատասխանատվությունը գտնվելու երկրի օրենսդրության համաձայն, որից հետո նա կարտաքսվի այդ երկրից եւ հինգ տարի ժամկետով իրավունք չի ունենա մուտք գործել Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք:

- Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրներում առանց աշխատանքի թույլտվության աշխատելը համարվում է անօրինական, ինչը հնարավոր է հանգեցնի այդ երկրից արտաքսման եւ այդ երկիր մուտք գործելու արգելքի:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՆՈՐ ՕՐԵՆՔ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

***Սկսած 1983 թվականից, ՄԱԿ-ի որոշմամբ, մարտի 15-ը հայտարարվել է սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օր: Նման որոշման ընդունումը պայմանավորված էր սպառողների իրավունքների պաշտպանության հրատապությամբ: Տարբեր երկրներում մշակվեցին համապատասխան օրենքներ, որոնք լայն կիրարկում գտան: Սպառողների իրավունքների պաշտպանությունը առանձնակի նշանակալից է նաեւ Եվրամիության համար եւ պատահական չէր, որ Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը նախատեսում էր այդ ուղղությամբ որոշակի միջոցառումների անցկացման պարտավորությունը: Վերջին մեկ տարվա ընացքում այդ ուղղությամբ որոշակի քայլեր կատարվել են, թեպետ առաջիկայում անելիքները շատ են:***




Ամենայն հավանականությամբ, Վրաստանը այն բացառիկ երկրների թվին է պատկանում, որտեղ ֆիզիկապես բացակայում է սպառողների իրավունքի մասին օրենքը: Որքան էլ տարօրինակ լինի, նման օրենք ընդունվել էր, որը, սակայն, 2012 թվականի մայիսին անվավեր ճանաչվեց: Այն փոխարինվեց երկու օրենսգրքով՝ պարենի անվտանգության եւ ազատ շրջանառության մասին օրենքներով: Վերոնշյալ օրենքների մանրամասն ուսումնասիրությունը, օրինակ, պարենի անվտանգության օրենքի կոնկրետացումը, ցույց է տալիս, որ այն մասնակիորեն է պաշտպանում սպառողի իրավունքը: Մասնավորապես, այդ օրենքի 12-րդ հոդվածի երրորդ կետը վավերացնում է, որ մթերքի բաղադրությունը եւ դրա անվտանգ օգտագործման կարգն ու պահպանման հատուկ պայմանները պետք է նշված լինեն վրացերեն, թեպետ մեր շուկաներում դեռեւս շատ են ապրանքները, որտեղ նշումներն արված են օտար լեզվով: Հետեւաբար, սպառողների մեծ մասի համար գաղտնիք է մնում ինչպես մթերքի բաղադրությունը, այնպես էլ՝ դրա օգտագործման կարգը: Թեպետ ակնհայտ փաստ է, որպեսզի գնորդը կատարի ճիշտ ընտրություն, պետք է իր համար մատչելի լեզվով տեղեկատվություն ստանա մթերքի անվանման, բաղադրության, արտադրողների, պիտանիության եւ այլնի մասին: Խոսքը վերաբերում է ոչ միայն պարենամթերքին, այլեւ առաջին սպառման եւ ընդհանրապես սպառման բոլոր ապրանքներին:

Հատկանշական է, որ պարենամթերքի որակի վերահսկողությունը իրականացնում են պարենի ազգային գործակալությունը եւ սպառողների իրավունքների պաշտպանության Momxmarebeli.ge կայքէջի թեժ գիծը, իսկ ինչ վերաբերում է մյուս ապրանքներին, ինչպես ներկրված, այնպես էլ երկրի ներսում արտադրվող այդ արտադրանքը ոչ մի կարգավորման ու վերահսկողության ենթակա չէ:

Ինչպես նշվեց վերեւում, սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքը, որը Վրաստանում գործում էր 1996 թվականից, 2012-ի մայիսին վերացվեց, ինչի արդյունքում երկրի ողջ մասշտաբով սպառողների իրավունքները բավականին սահմանափակվեցին: Հարցի կարգավորումն առանձնակի հրատապություն ստացավ Եվրամիություն-Վրաստան ասոցիացման համաձայնագրի ստորագրումից հետո, որի կետերից մեկը պահանջում է այդ ուղղությամբ Վրաստանի օրենսդրության համապատասխանեցումը Եվրամիության չափորոշիչներին: Հենց այդ առումով էլ անելիքները շատ են, քանզի սպառողների իրավունքների եւ շահերի պաշտպանության եվրոպական չափորոշիչները նախատեսում են ոչ միայն այդ իրավունքների օրենսդրական շրջանակներում տեղադրումը, այլեւ դրանց մեխանիզմների ստեղծման ապահովումը:

Հենց պատճառը դա դարձավ, որ անցյալ տարվա վերջերին մշակվեց օրինանախագիծ, որով սահմանվեցին սպառողների իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը եւ այդ ուղղությամբ պետական քաղաքականությունը: Օրինանախագիծը ուղղված չէ միայն սպառողներին ոչ պիտանի մթերքներից պաշտպանությանը: Այն հստակեցնում է նաեւ վաճառող-գնորդ հարաբերությունը, մասնավորապես, «վաճառած ապրանքը ետ չի ընդունվում» սկզբունքի կիրարկումը, որը վերջին ժամանակներում դարձել է առեւտրաշրջանառության հիմնաքարը: Փաստորեն, ապրանքի գնման գործընթացն ուղեկցվում էր գնորդ-վաճառող համակարգում նախնական պայմանավորվածությամբ, անհրաժեշտության դեպքում, ապրանքը վերադարձնելու կամ փոխելու պայմանով: Հակառակ դեպքում, անկախ իր իրավացիությունից, սպառողը մնում էր տուժյալ վիճակում: «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» նոր օրինանախագիծը նախատեսում է սպառողին վերապահել անհրաժեշտության դեպքում, ապրանքի վերաբերյալ ստույգ տեղեկատվություն ստանալու, գնած ապրանքը վերադարձնելու, փոխելու, կարգավորելու, վճարած գումարը վերադարձնելու եւ այլ իրավունքներ: Բնականաբար, այդ պայմաններում գնորդը պարտավոր է պահպանել մթերքի ապրանքային տեսքը եւ պետք է համապատասխանի ապրանքի վրա նշված պիտանիության ժամկետներին:

Նոր օրինանախագիծը նախատեսում է նաեւ սպառողների օմբուդսմենի ինստիտուտի հիմնումը: Օրինանախագծի հեղինակների պնդմամբ, եթե երկրում արդեն հիմնվել եւ գործում է բիզնես օմբուդսմենի ինստիտուտը, ապա ինչու չպետք է գործի նաեւ սպառողի օմբուդսմենը, որի անմիջական գործառույթը պայմանավորված կլինի սպառողների իրավունքների պաշտպանությամբ:

Նշենք, որ սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրինանախագիծը երկրի խորհրդարանի կոմիտեներում արդեն քննարկվել է եւ լիագումար նիստում առաջին ընթերցմամբ հավանության արժանացել: Մոտ ժամանակներում օրենսդիր մարմինը ձեռնամուխ կլինի օրենքի առանձին կետերի քննարկմանը, ինչպես նաեւ հանրային քննարկման ընթացքում ներկայացված դիտողությունների ու առաջարկությունների մանրամասն վերլուծությանը:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*